ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆ

№ 89/1-L «11» 05 2022թ.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՄԲԻՈՆՆԵՐԻ ՎԱՐԻՉՆԵՐԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) գիտական խորհրդի 2016 թ. մայիսի 26-ի թիվ 7/6 որոշմամբ հաստատված «Երևանի պետական համալսարանի ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգի» (այսուհետ՝ Ընթացակարգ) 8-րդ կետի պահանջները և ղեկավարվելով ԵՊՀ կանոնադրության 56-րդ կետի 10-րդ ենթակետով՝

հրամայում եմ՝

1. ԵՊՀ ներքոհիշյալ ամբիոնների վարիչների թափուր պաշտոնները համալրելու նպատակով 2022թ. հունիսի 15-ին՝ Ընթացակարգի համաձայն, նշանակել և անցկացնել մրցութային ընտրություն.

Հ/Հ	ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄԸ	ԱՄԲԻՈՆԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ
1.	Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետ	Երկրաֆիզիկայի, ճարտարագիտական երկրաբանության և ջրաերկրաբանության ամբիոն	1
2.	Աստվածաբանության ֆակուլտետ	Աստվածաբանության և հայ եկեղեցու պատմության ամբիոն	1
3.	Ռուս բանասիրության ֆակուլտետ	Ռուսաց լեզվի ամբիոն	1
4.	Հայ բանասիրության ֆակուլտետ	Հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոն	1
5.	Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետ	Գերմանական բանասիրության ամբիոն	1
6.	Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետ	Ֆրանսիական բանասիրության ամբիոն	1
7.	Պատմության ֆակուլտետ	Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոն	1
8.	Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետ	Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկայի ամբիոն	1
9.	Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետ	Մեխանիկայի ամբիոն	1
10.	Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետ	Դիսկրետ մաթեմատիկայի և տեսական ինֆորմատիկայի ամբիոն	1
11.	Ռադիոֆիզիկայի ֆակուլտետ	Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ամբիոն	1
12.	Ֆարմացիայի ինստիտուտ	Կենսաբժշկագիտության ամբիոն	1
13.	Արևելագիտության ֆակուլտետ	Իրանագիտության ամբիոն	1
14.	Արևելագիտության ֆակուլտետ	Արաբագիտության ամբիոն	1

15.	Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ	Քաղաքագիտության ամբիոն	1

2. ԵՊՀ գիտական քարտուղարին՝ ԵՊՀ ամբիոնների վարիչների ընտրության նշանակման ու անցկացման վերաբերյալ հայտարարությունը, ընտրությունից առնվազն 30 օր առաջ հրապարակել ԵՊՀ ինտերնետային կայքէջում:

3. ԵՊՀ անձնակազմի կառավարման բաժնին՝ սահմանված կարգով կազմակերպել ամբիոնի վարիչի թեկնածուների առաջադրման վերաբերյալ փաստաթղթերի ընդունման գործընթացը:

4. Սույն հրամանի մասին սահմանված կարգով տեղեկացնել ԵՊՀ պրոռեկտորներին, անձնակազմի կառավարման բաժնին, գիտական քարտուղարին և ֆակուլտետների դեկաններին:

ԵՊՀ ՌԵԿՏՈՐ՝ Հ. Հովհաննիսյան